

ՄԱՐԳԱՐԻՏ ԽԱՉԻԿՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԻ ԶԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՇՈՒՐՁ ՈՒՐԱՐՏԵՐԵՆՈՒՄ

Ժամանակի քերականական կարգի խնդիրը ուրարտերենում ըստ էության դեռևս չի ուսումնասիրվել:

Այս բացը բխում է ուրարտական դիվանի բնույթից. այն բաղկացած է տեքստերի երկու հիմնական խմբից՝ ուրարտական թագավորների արշավանքներին, նվաճումներին և շինարարական գործունեությանը նվիրված պատմողական տեքստերից և կարգադրություններից: Տեքստերի առաջին խումբը ենթադրում է անցյալ ժամանակի բայաձևերի օգտագործում, երկրորդը՝ անիրական (պայմանական, ըղձական) եղանակների կիրառում:

Ինչ վերաբերում է աննշան թվով մեզ հասած վարչական փաստաթղթերին և նամակներին, որոնցում կարելի է ենթադրել ոչ-անցյալ ժամանակի բայաձևերի ավելի լայն օգտագործում, ապա նրանք, ցավոք, բավարար չափով վերլուծության չեն ենթարկվում:

Մինչև վերջերս այս խնդրի լուծման համար խտուխական նյութի ներգրավումից ստացված արդյունքը մեծ չէր¹, քանի որ խտուխերենը՝ իրեն հատուկ բավականին հետևողական և ներդաշնակ բայական ժամանակների համակարգով, նկատելիորեն տարբերվում է ուրարտերենից:

Թեև հին խտուխերեն տեքստերում, ինչպես նաև անձնական անուն-նախադասություններում վկայված բայաձևերը ավելի մեծ մասնությամբ են համընդհանրում համապատասխան ուրարտերեն ձևերի հետ (խտու. pašt-o-m² 'նա կառուցեց', Urk. 6; Սո-ա-Բ-Թեօօ 'Թեշոբն եկավ' (անձնանուն), ուրարտ. šidišt-o-ne² '(նա) կառուցեց-այն, KYKH, passim; ušt-a-be 'նա արշավանքի ելավ', ibid., passim), ինչպես դա առաջինը նկատեց Ի. Մ. Դյակոնովը³, սակայն այդ նյութը ևս բավարար չէր մեզ հետաքրքրող խնդրի պարզաբանման համար:

Վիճակը որոշ չափով վախճվեց Բողազքյայում խտուխ-խեթական բիլինգվալի հայտնաբերումից հետո⁴: Այդ տեքստը, արժեքավոր նյութ ընձեռնելով խտուխների գրականության, սոցիալական կյանքի, կենցաղի, դիցաբանական և էթնիկական պատկերացումների մասին, վիթխարի

նշանակություն ունի նաև խոտի-ուրարտական լեզվաբանության համար: Ակնհայտորեն վերաբերելով խոտիերենի զարգացման հին շրջանին՝ այդ տեքստի լեզուն հանդես է բերում մի շարք առանձնահատկություններ, որոնք հայտնի են նաև ուրարտերենին, սակայն բնորոշ չեն խոտիերենի ուշ բարբառներին: Դա հույս է ներշնչում, որ բայական ժամանակի արտահայտման միջոցների ուսումնասիրումը հին խոտիերենում կարող է որոշ չափով նպաստել ուրարտական փաստերի վերծանմանը:

Դասական խոտիերենում (խոսքը խոտիերենի կարևորագույն սկզբնաղբյուրի՝ Միտանիի թագավոր Թուշրատտայի մամակի լեզվի մասին է՝) ներգործական բայերը խոնարհվում էին բացառապես էրգատիվ, իսկ չեզոք սեռի բայերը՝ արսոյլուտիվ խոնարհմամբ: Էրգատիվ խոնարհումը կազմվում էր բայի հիմքին էրգատիվ դիմավոր ցուցիչների կցումով (Հ+էրգ՝ tad-av 'ես սիրում եմ', Mit. I 75; tad-ia 'մա սիրում է', ibid. I 74; ur-av a- 'մենք ցանկանում ենք', ibid. I 80), արսոյլուտիվ՝ բայի հիմքին բայի բնականվիչ (թեմատիկ) ձայնավորի⁶ և արսոյլուտիվ շարքի դիմավոր ցուցիչների կցումով (Հ+բմ. ձայն.+արս. 'սո-ա-lla- 'մա գալիս է', Mit. I 115; pisand- -i-tta- 'ես ուրախացա', ibid. IV 9):

Թե էրգատիվ և թե արսոյլուտիվ խոնարհման ձևերը դասական խոտիերենում ունեին երեք ժամանակ՝ ներկա, անցյալ, ապառնի: Ներկա ժամանակի ձևերը նշույթավորված չէին, անցյալ ժամանակը կազմվում էր -օ -/-ost-, իսկ ապառնին՝ -ed-/ett- ածանցների միջոցով (kad-ia 'մա ասում է', Mit. IV 12; kad-ed-av 'ես կասեմ', ibid, III 99; kad-օ -a 'մա ասաց', ibid, I 96):

Պատկերը բոլորովին այլ էր հին խոտիերենում: Այստեղ ևս վկայված են -օ - և -ed- ածանցները, սակայն դրանք ակնհայտորեն չեն կատարում ժամանակի ցուցիչների դեր: Այսպես, օրինակ, կողք կողքի վկայված են -ed- ածանցով և առանց դրա ապառնի իմաստ արտահայտող մի շարք ձևեր, որոնց խեթերենում համապատասխանում են ոչ-անցյալ ժամանակի բայեր (pah-ed-av...hub-üst-av = խեթ. harnikmi...duwarnahhi 'ես կոչնչացնեմ...hu կավերիս', KBo 32 19 Vs. 24...26):

Մյուս կողմից, ավանդված են անցյալ ժամանակ արտահայտող բայաձևեր -օ - ածանցով (šiyal-օ -օm 'մա դրեց', KBo 32 14 Rs. 56; himzañ-օ -i-0 'մա գտնորվեց', ibid., 13 Vs. 10; nahh-օ -օ-0 'մա մտեցրեց', ibid., 13 Vs. 26), սակայն ստանց այդ ածանցի ձևերը ավելի մեծ թիվ են կազմում: Ուստի, -օ - ածանցը չի կրում անցյալ ժամանակի ցուցիչի իմաստ:

Խոտի-խեթական բիլինգվալում վկայված են նաև պայմանական և ըղձական եղանակի ձևեր, որոնք գործածված են ապառնի ժամանակի

իմաստով և համապատասխանում են խեթերեն ոչ-անցյալ ժամանակի բայածևերին (*kadul-i/e* = *memiškimi* 'ես կպատմեմ', KBo 32 14 Rs. 21; *kappil-ewa* = *piweni* 'մենք կլցնենք', *ibid.* 15 Vs. 19; *un-ewa-tta* 'ես կգամ', *ibid.*, 19 Vs. 23):

Հին խտիերենի մյուս տարբերությունը դասականի համեմատությամբ այն է, որ վերջինում ներգործական բայերը խոնարհվում են բացառապես երգատիվ խոնարհմամբ, մինչդեռ այստեղ ներգործական բայերը վկայված են ոչ միայն երգատիվ, այլև աբսոլյուտիվ խոնարհմամբ: Ներգործական բայի աբսոլյուտիվ խոնարհման ձևերում բնականվիչ ձայնավորի իմաստով հանդես է գալիս *-o-* ձայնավորը (*ulan-o-m* 'նա խժոեց', KBo 32 14 Rs. 12; *pašt-o-m* 'նա կառուցեց', *ibid.*, 14 Rs. 35; *ale-o-b* 'նա մտնեցեց', *ibid.*, 14 Rs. 36; *tawast-o-m* 'նա ձուլեց', *ibid.*, Vs. 43 և այլն), որը բացակայում է դասական խտիերենում:

Ներգործական բայի երգատիվ և աբսոլյուտիվ խոնարհման ձևերը հանդես են բերում հետևյալ օրինաչափությունը. առաջինները արտահայտում են ոչ-անցյալ ժամանակ (*huded-av* 'ես կօրհնեմ', KBo 32, 19 Vs. 14; *talašt-av* 'ես կվերցնեմ/կտանեմ', *ibid.*, 19 Vs. 35; *arol-av-tna* 'hu այն [-tna-] տալիս եմ/ուղարկում եմ', *ibid.*, 15 Rs. 15; *ar-ia-ma* 'նա չի [-ma] տալիս', *ibid.*, 15 Rs. 16), վերջինները՝ անցյալ (*haban-a-b* 'նա ճամփա ընկավ', *ibid.*, 14 Vs. 3; *nahh-a-b* 'նա մտնեց', *ibid.*, 13 Vs. 4; *kelkelešt-o-m* 'նա դրեց', *ibid.*, 13 Vs. 6):

Խտիերենի հետագա զարգացումը հանգեցնում է նրան, որ ներգործական բայը այլևս չի խոնարհվում աբսոլյուտիվ խոնարհմամբ, աբսոլյուտիվ խոնարհման համակարգում վկայված ներգործական բայի *-o-* բնականվիչ ձայնավորը կորսվում է, իսկ վերոհիշյալ *-o** և *-ed-* ածանցները, ոլանք, ըստ ամենայն հավանականության, գործողության կերպի (*Aktionsart*) ցուցիչներ էին, վերախմաստավորվելով, ձեռք են բերում ժամանակային ցուցիչների իմաստ⁷:

Խտիերենում ժամանակի համակարգի ձևավորման մասին այս քնուկ անդրադարձից հետո վերադառնանք ուրարտերենին:

Ուրարտերենը, ակնհայտորեն տարբերվելով դասական խտիերենից, որոշակի ընդհանրություններ է հանդես բերում հին խտիերենի հետ. նրան, ինչպես և հին խտիերենին, հայտնի չեն ժամանակ արտահայտող հատուկ ածանցներ, չեզոք սեռի բայերի ուղարտում չի նշմարվում ժամանակի տարբերակման որևէ միջոց, մինչդեռ ներգործական բայերը տարբերակում են անցյալ և ոչ-անցյալ ժամանակները: Սակայն, ի տարբերություն խտիերենից, որտեղ ներկա ժամանակը արտահայտվում էր երգատիվ խոնարհման ձևերի միջոցով, իսկ անցյալը՝ աբսոլյուտիվ, ուրարտերենում ներկայի ձևերը կազմվում էին բայի հիմքին երգատիվ վերջավորության (*al-ie* [զրաֆ. *a-li a-li-i/e*] 'նա ասում է', KYKH, *passim*; *tiy-*

ia-ne [գրաֆ.՝ ti-a-ni] 'նա ասում է-այն [-ne]', նույն տեղում, 125 3; 143 2; ui...ar-ia-ne [գրաֆ.՝ a-ri-a-ni] 'նա չի [ui] տալիս-նրան [-ne]', նույն տեղում, 446 8)⁸, իսկ անցյալինը՝ բայի հիմքի և էրզատիվ վերջավորության միջև -o- ձայնավորի ազդեցումով (zašg-o-0-ne 'նա սպանեց/ռչնչացրեց-նրան [-ne]', KYKH, *passim*; par-o-ve 'ես քչեցի', *ibid.*, *passim*): Փաստորեն ներգործական բայերի բնականմիչ ձայնավորը այստեղ ձեռք է բերում լրացուցիչ՝ անցյալ ժամանակի ցուցիչի նշանակություն:

Այսպիսով, ուրարտերենում բայական ժամանակի համակարգը ավելի արխայիկ է դասական խոտիերենի համեմատությամբ: Ինչպես հին խոտիերենում, ուրարտերենում այն չի ընդգրկում չեզոք սեռի բայերը՝ տարածվելով միայն ներգործական բայերի վրա:

Այդ փաստը, ինչպես նաև խոտիերենում և ուրարտերենում ժամանակ արտահայտելու համար տարբեր միջոցների օգտագործումը, վկայում են այն մասին, որ բայական ժամանակի քերականական կարգը հատուկ չէր խոտի-ուրարտական մախալեզվին, ուստի այն հիշյալ լեզուների հետագա զարգացման արդյունք է:

Ինչ վերաբերում է ուրարտերենի ժամանակների տարբերակմանը անվանական ստորոգյալով մախադասություններում, ապա այստեղ ներկա ժամանակը արտահայտվում էր -ne հոդի միջոցով, իսկ անցյալը՝ man- 'լինել' բայի և ստորոգելիական վերադիրի կապակցությամբ (Sarduri-ne Argište-he...aluse Tošpa URU 'Սարդուրե Արգիշտորդին... Տոշպա թաղաքի տիրակալն է', KYKH 244 33-34; qarbe salze manu 'ժայռը գահավեժ էր' [?], *ibid.*, 419 4)⁹:

MARGARIT KHACHIKYAN

ON THE CATEGORY OF TENSES IN URARTIAN

The paper deals with the problem of tenses in Urartian language. Based on the interpretation of a few Urartian forms as 3rd person singular present tense forms of the ergative conjugation (al-ie 'he says', ti-ia-ne 'he says-it', ar-ia-ne 'he gives-her', cf. parallel Hurrian forms tad-ia 'he loves', kad-ia 'he says' etc.), the author suggests, that, unlike the past tense of transitive verbs, formed by adding ergative personal markers to the thematic vowel of transitive verbs -o- (amast-o-ve 'I burnt'), the present tense of transitive verbs was deprived of this vowel. Thus, the thematic vowel of transitive verbs, having lost its original function, played actually the role of the past tense marker.

Unlike Hurrian, which had developed a harmonious system of tenses, comprising all types of verbs (transitive, as well as intransitive ones), the temporal system in Urartian seems to be limited to transitive verbs only and, thus, reveals some features in common with old Hurrian (the latter also distinguished tenses in the sphere of transitive verbs only, moreover, the marker of transitivity was not used in the

Hurrian forms of the present tense, either). This attests of the archaism of the Urartian temporal system, as well as of the underdevelopment of the category of tenses in Proto-Hurro-Urartian.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հմմտ. Ի. Մ. Դյակոնովի -ed- և -(a)- ածանցներին համապատասխանաբար անկատար կերպի (ոչ ժամանակի) և ապակերպային (безвидовой) իմաստների վերագրումը ("Языки древней Передней Азии" [ЯДПА], М. 1967, 147 և "Hurrisch und Urartisch" [HuU], München 1971, 116) և հեղինակի՝ al-ie (գրաֆ.՝ a-li a-li-i/e, КУКН [Н. В. Арутюнян, "Корпус урартских клинообразных надписей", Ереван 2001], passim), tiy-ia-ne (գրաֆ.՝ ti-a-ni, նույն տեղում, 125 3; 143 2) ձևերը որպես ապակերպային (իսկ, ըստ էության, ներկա ժամանակի) ձևեր դիտարկելը ("Хурритский и урартский языки", Ереван 1985, 97).
2. Այս ձևերի օ-ն մախկինում ընդունված էր տառադարձել -օ-: Սակայն խոտի-խեթական քիլինգվայի հայտնաբերումից հետո (տես ծանոթագրություն 4), որի ուղղագրությանը հատուկ էր ս և օ ձայնավորների տարբերակումը, պարզվեց, որ ներգործական բայերի քնակազմիչ ձայնավորը -օ- էր ընթերցվում (տես G. Wilhelm, *Zum Hurritischen Verbsystem*, "Texte, Sätze und Moneme" [Festschrift Heger], 1992, 667): Խոտիքերնիի հետ համամանությանը ուղարտներնում ևս ներգործական բայերում ս ձայնավորը տառադարձում ենք օ:
3. I. M. Diakonoff, HuU, 111, n.123; Դյակոնովի կարծիքով, past-օ-մ ձևի -մ ածանցը համապատասխանում է ուրարտերեն -ne-ին և կատարում է ուղիղ խմորի դեր: Հեղինակի կարծիքով, սակայն, այն ոչ քե -ne, այլ -be- ածանցի հնչյունային տարբերակն է և կատարում է գործողության սուբյեկտի (ենթակայի), ոչ քե խմորի դեր, տես M. Khačikjan, *On the Typology of Hurro-urartian Verb*, "Societies and Languages of the Near East" (Studies in Honour of I. M. Diakonoff), Warminster, Wilts 1982, 165-168: Այս ենթադրությունը, հաստատվեց հետագայում խոտի-խեթական քիլինգվայի տվյալներով, որտեղ կոոք-կոոքի վկայված են -մ և -b ածանցով բայաձևերը:
4. H. Otten, Chr. Ruster, "Keilschrifttexten aus Bogazköy" [KBo] XXXII, Berlin. 1990, nn.11-19; E. Neu, "Das Hurritische: Eine altorientalische Sprache in neuem Licht" Akad. d. Wiss. u. d. Literatur, Mainz-Stuttgart: Steiner-Verl. Wiesbaden 1988, 32; "Studien zu den Bogazköy-Texten" 32 (1996) 23,101.
5. Winkler-Abel, "Der Thontafelfund von el-Amarna" (Mitteilungen aus den orientalischen Sammlungen der Kgl. Museen zu Berlin, Heft. 1-3, 1889-1890; J. Friedrich, "Kleinasiatische Sprachdenkmäler", Berlin 1932, 8-32.
6. Բնակազմիչ ձայնավորները՝ -օ-, -a-, -i-, -u-, կախված լինելով բայի քնությանց, գործածվում էին համապատասխանաբար ներգործական (-օ-), չեզոք (-a-), միջին սեռի (-i-) և վիճակի բայերի հետ (-u-):
7. Խոտիքերնի բայի մասին ավելի մանրամասն տես M. L. Khachikyan, *The Hurrian Verb Revisited*, "Studies on the Civilization and Culture of Nuzi and the Hurrians" 10, 1999, 257-265.

8. Պետք է, սակայն, նշել, որ –*ne* մասնիկը ուրարտերենում, ինչպես և խուտիերենում, կորցրել էր որոշյալ հոդի իր մախնական իմաստը (տես Մ. Խաչիկյան, *Խուտիերեն հոդի ծագման և զարգացման շուրջ*, “Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ” XXI, Երևան 2002, 364-368): Այն գործածվում էր եզակի թվի արսոյութիվ հոլովում (*Haldi-ne ustabe* ‘Խաղդին ելավ արշավանքի’). *KYKH*, *passim*) և որոշիչի և հատկացուցիչի կազմում: Վերջին երկու դեպքերում այն կատարում էր հարաբերկցական մասնիկի դեր. նրա միջոցով որոշյալի և հատկացյալի հոլովական վերջավորությունները կցվում էին որոշիչի և հատկացուցիչի ձևերին (*Rusa-se Argistehi-ne-se* ‘Ռուսա Արգիշտյանը [երգատիվ հոլով]’, *KYKH*, *passim*; *Haldiy-ne-le sest-i-le* ‘Խաղդիի դուռը [բառացի՝ դռները]’, նույն տեղում, 92 3): Այլ կերպ էր բացատրում այս ձևերը Ի. Մ. Ղյակոնովը (տես *ЯДПА*, 144; *НУ*, 110, 134), սակայն խուտի-խեթական քիլինգվայի նյութը, կարծես, հաստատում է հեղինակի՝ դրանք երգատիվ խոնարհման ձևեր մեկնաբանելու հնարավորությունը (տես ծանոթագրություն 1):
- 9.